

## ՀԱՅ ԿԵԼՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

„Ռուսական պատմական լրագրի այս տարուայ յունուարի երեք համարներում (ԱՆ 1883, 84, 88) Ա. Ա. տառերի տակ թագնուած մի պարոն «վճռում է ուս ընթերցողի ուշադրութիւնը դարձնել հայ գլորոցների վրայ զինաւորապէս երկու պատճառով։ Պատճառներից առաջինն ընդհանուր ընաւորութիւն ունի. հայ գլորոցները յարմարաւոր նիւթ են ակնյայանի կերպով ցոյց տալու, թէ առանձին ազգութիւններն ինչ ճանապարհով են կոփում դրանց գլորոցները ուստական պետական սկզբունքների ազգեցութիւնից առանձնացնելու համար։ Երկրորդ պատճառը մասնաւոր ընաւորութիւն ունի. հայ գլորոցների խնդիրը մի շարք առանձնայատկութիւններ ունի, որի հետ արժէ ուսւ ընթերցողին ծանօթացնել, քանի յարմար ժամանակն է։ Եւ յօդուածագիրն սկսում է իւր խոստումը կատարել, ըստ երկոյթին պաշտպանելու ուստաց պետութեան շահերը։ Մենք անկեղծօրէն ցաւում ենք, որ Ռուսիայի այդ պարոնը իւր այդ գովելի նպատակին ոչ միայն չեն հասել, այլ ուղղակի վնասել է պետութեան շահերին. նա դէմ է զնացել բուն իսկ պետական շահերին, ուսւ պետութեան սկզբունքներին, ուստական ազգի լուսաւոր և համբերատար ոգունու եւ այդ ամենը շնորհիւ այն հանդամանքի, որ նա մօտեցել է մի հարցի, որին լիապէս ծանօթ չէ, շօշափել է մի ժողովրդի կեանքն ու գլորոցները, որոնց մասին պատահական, հատուկտոր տեղեկութիւններ ունի, դժբախտաբար զոհ եղած սխալ աղբիւրների կամ իւր իսկ յատուկ միտումների։

Պարոն յօդուածագրի բոլոր մեղադրանքներից մենք միայն մէկին կուգէինք պատասխանել — Ազգայնական ձգտումներով, ազգային սեպարատիվմով են տոգորուած հայ ժողովուրդն ու նրա գլորոցները, հայ հոգեորակա-

նութիւնն ու նրա կրթական հաստատութիւնները, ահա այն ծանր և գերազանցօրէն անհիմ մեղադրանքը, որ այդ պարոնը բարձում է հայ կեանքի և իրականութեան վրայ:

Եւ սակայն մեր կեանքի և գլորոցների, մեր իրականութեան և մամուլի վերաբերմամբ հարեանցի ակնարկը, մի թեթև գիտողութիւնն անգամ կապացուցանէր պարոն յօդուածագրին, որ հայ տարրը Կովկասում և Ռուսաստանի բալոր անկիւններում գիտակցօրէն և կումաւոր ամենատամուր կապերով կապուած է ոռւսաց պետութեան հետ, ազատօրէն ապրելու և նրա հզօր հովանու տակ խաղաղ կերպով առաջադիմելու: Ի՞նչ կուլտուրայով է ապրում այժմ մեր իրականութիւնն ու Կովկասահայ կեանքը, որտեղից են զալիս մեր մաաւոր ու հոգեկան պահանջներին բաւարարութիւն տուող հոսանքները, որտեղ է կրթութիւն ստանում մեր ուսանող երիտասարդութեան 99-րդ տոկոսը, որ գրականութիւնն է, որով մենք այժմ ապրում ենք և գէպի որը թեարձակ պանում—այս հարցերի պատասխանը յօդուածագրին պարզ և ըմբռնելի կը լինէր, եթէ որ նա հոգ տարած լինէր իւր քննադատելի ինպրին մի փոքր մօտիկից նայել:

Մեզ մեղադրում են, որ մենք չենք ցանկանում մեր գլորոցներում ոռւսաց լեզուին պատշաճաւոր տեղ տալ ու գիտակցօրէն խոյս ենք տալիս նրանից, բռնուած լինելով դարձեալ ազգային սեպարատիզմով: Մենք վճռականօրէն բողոքում ենք յօդուածագրի այդօրինակ միտումաւոր ու մոլորեցնող յայտարարութիւնների դէմ և հրաւիրում այդ պարոնին, եթէ նա ցանկանում է ոռւս ընթերցողին ծառայութիւն անել, գալ մեր իրականութեան, մեր հաստրակական խաւերի միտումներին և ձգտումներին աւելի մօտ ծանօթանալու, այն ժամանակ նա կը զգայ և կը մրոնի, որ մենք չենք կարող այգպէս վարուել, որովհետեւ դա դէմ է մեր խալ անհամական, հասարակական շահերին: Առաջ համար պարզ չէ այժմ, որ ոռւսաց լեզուի ուսուցումը և մեր գլորոցներում նրա յաջող դասաւանդութիւնը

մեր իսկ սեփական շահն է և այստեղ անզօր են զանազան միտումներ և կանխակալ մաքեր։ Ով ուզում է կովկասում առաջ գնալ և որևէ ասպարիզում գործել, նա պիտի իմանայ պետական լեզուն, և որքան լաւ իմանայ, որքան մօածանօթ լինի նա ուռւ կեանքի պատմութեանը, լեզուին և իրաւունքին, այնքան աւելի շատ յոյսեր ունի նա առաջ գնալու, զարդանալու։ Նայեցէք հայ վաճառականին, հայ բժշկին, հայ իրաւարանին ու հայ ուսանողին—զիտեցէք ամբողջ հայ մտաւորականութիւնը—գրանց բոլորի բուռն ձգտումն է յետ չմնալ կեանքից, կեանքում մաքառելու բոլոր միջոցներն ունենալ. իսկ ուռսաց պետութեան մէջ այդպիսի լաւագոյն միջոցներից մէկը բուն իսկ ուռսական լեզուն է։ Մեզ հարկաւոր չեն այդպիսի յորդորներ ուռսաց լեզուի մասին, անօգուտ և միանդամայն ապարդիւն են միտումաւոր գրուածքները հայկական սեպարատիզմի մասին. այդպիսի զրպարտութիւնները կարող են առելութիւն ծնեցնել մի ժողովրդի մէջ, որն ապրում է ուռսաց պետութեան մէջ, մնալով այդ պետութեան հաւատարիմ ու բարեկամ քաղաքացի։

Կարելի է քննադատել մեր կեանքի այս կամ այն կողմը, մեր դպրոցների այս կամ այն առարկան կամ ծրագիրը, բայց նրանց վերագրել աղջանական սեպարատիզմ—նշանակում է կրկնել հին, շատ հին զրպարտութիւններ առանց հիմունքի։ Գալով պարոն յօդուածազրի քննադատութեան կէտերին, ցաւ ենք յայտնում կրկն, որ յօդուածազիրն անձանօթ է մեր իրականութեան։ Մեղադրում է հայ բարձր հոգեորականութիւնը, որ նա իր թէ աշխատում է հայ եկեղեցական դպրոցները հանել պետական հսկողութիւնից և առանձնացնել. մեղադրում է հոգեորականութիւնը նաև այն բանի համար, որ նա հայ դպրոցական գործերում լայն մասնակցութիւն է տալիս հայ ժողովրդական տարրերին, որ նա հայ եկեղեցական դպրոցներում աշխարհական առարկաներ շատ է մտցրել ու այդ մաքով ու ուղղութեամբ երկարում է մեղադրանքների շարանը։

Մենք այդ բոլորին պատասխանում ենք հետեւալ հարցով-արդեօք ծանօթէ պարոն յօդուածագրին 1905 թուի օգոստոսի 1-ի Բարձրագոյն Ռւկագի բավանդակութիւնը, արդեօք կարդացել է նա Կայսերական Հրովարտակի հետեւալ տողերը. «Կովկասի վոխարքան իրան յանձնուած երկրի պայմաններին ծանօթանալուց յետոյ, ներկայացրել է Մեզ իւր ենթագրութիւնները՝ փոփոխելու համար միքանի որոշումներ, որոնք վերաբերում են ընակչութեան Հայկական մասին և դժուարացնում են նրա զարգացման կանոնաւոր ու հանգիստ ընթացքը: Բարւք համարելով հաստատել Մեր փոխարքայի առաջադրութիւնը, Մենք ընդարձակ կրթական միջոցներ ենք շնորհում հայ-լուսաւորչական հոգևորականութեանը ժողովրդի օգտին գործելու համար»:

Այդ պարզ և որոշ խօսքերի իմաստը միթէ չի հասկացել պ. յօդուածագիրը և միթէ այժմ տւելի բան է անում հայ հոգևորականութիւնը, քան Բարձրագոյն Հրովարտակի մէջ ակնարկուած կէտերը: Ժողովրդի համար զործողը-ինչպէս հրամայում է Բարձրագոյն Ռւկագը, պէտք է ի նկատի ունենայ այն ժողովրդի շահերն ու ցանկութիւնները, որի համար նա գործի է կանչուած: Իսկ այդ շահերն ու ցանկութիւններն են ուուսական մեծ պետութեան մէջ ու նրա բարձր հովանաւորութեան տակ խաղաղ կուլտուրական կեանքով առաջ գնալ, ապրել: Մեր պատմութեան ամբողջ ընթացքում հոգևորականութիւնը միշտ միասին է գնացել հայ ժողովրդի հետ, դարերի աւանդութիւնը սրբագործել է այդ մասնակցութիւնը և այսօր էլ հայ հոգևորականութիւնը չպիտի լինի, որ մեկուսացնէ հայ ժողովրդին իւր իսկ դպրոցների կրթական-կուլտուրական գործին մասնակցելուց: Բարձրագոյն Հրովարտակը ուրիշ բան չէ ասում, եթէ ոչ Բարձրագոյն սանկցիա է տալիս մէր հայկական դարաւոր աւտոնութիւններին:

Պարոն յօդուածագիրը զարմանքով է նկարագրում մէր եկեղեցական աղղային կեանքում ծխական հոգարար-

ձութիւնը, երէցփոխներին, և նոյն իսկ թեմական առաջնորդներին ու գրանց իրաւասութեան շրջանը—և այդ տմենը վերագրում է հայ հոգևորականութեանը։ Մենք այդ պարօնին կասենք, որ գրանք բոլորը մեր պատմութեան հետ են զարգացել, հայ ժողովրդի դարտւոր հաստատութիւններն են, այնքան հին և պատկառելի, ինչպէս այդ ժողովրդի գիրն ու գրականութիւնը, գպրոցն ու ուսումնարանը։ Գլխաւոր խնդիրն այստեղ այն է, թէ այդ բոլոր հաստատութիւնների մէջ հայ ժողովուրդն արդեօք սեպարատիզմի, հակամարտութեան ոգին է հանդէս բերում գէպի ոռւս պետութիւնը, թէ ոռւս մեծ ազգի հովանաւորութեան և նրա զօրեղ պաշտպանութեան տակ օրէնքների սահմաններում խաղաղ կուլտուրական աշխատանքով առաջ գնալու ձգտում։ Յօդուածագիրը պնդում է առաջինը. մենք համարում ենք նրա ամբողջ յօդուածը միաումաւոր խեղաթիւրում և առթից օգտուելով մի անգամ ես ասում. Ռուսաց պետութիւնը յանձին հայ ժողովրդի ունի կրթական կուլտուրական խաղաղ աշխատանքով ոգևորուած և տոգորուած հպատակներ, որոնք ռուսաց պետութեան հետ անկեղծ բարեկամական կապերով կապուած լինելուց աւելի շատ օգուտ ունին քան ոռւս պետութիւնը հայ ժողովրդից։ Ով այդպէս չի մտածում, ով այլ կարծիքիէ, նշանակում է մեր իրականութեանն անծանօթ է, կամ դիտմամբ թիւր կարծիքներ է տարածում։ Վերջին տեսակի լուրերն ու յօդուածները մի մեծ վնաս ունին—նրանք ամենից շատ վնասում են ռուսաց պետական շահերին կովկասում, որովհեան յուզում և պղտորում են խաղաղ ժողովրդի միաբը։

Ռուսահայ մամուլը յուզող հասարակական հարցերից մէկն այժմ գպրոցականի կողքին՝ Հայկական տպագրութեան չորսհարիւրամեակի խնդիրն է։ Այս տարի լրանում է չորս դար այն օրից, երբ մինչև այժմ մեզ հասած տեղեկութիւնների համաձայն առաջին հայե-

թէն զիրքը տպուեցաւ 1512 թուին, այսինքն ընդհանրապէս առաջին զրքի տպագրութիւնից 62 տարի յետոյ. (Յովհաննէս Գուտառեմբերգը մետաղեայ տառերը հնարեց 1436 թուին, իսկ առաջին լատիներէն աստուածաշունչը տպեց 1450 թուին):

Սյդ յորելեանը արտաքսոյ կարգի կարեոր և նշանակալից մի տօն է մեզ հայերիս համար. նա մեր զրականութեան, մտաւոր յառաջադիմութեան և ընդհանրապէս վերջին շրջանի մեր քաղաքակրթութեան տօնն է: Դա այն ամենի տօնն է, ինչ որ մենք հայնք հանդէս ենք բերել մտաւորի, հոգեկանի և զրականի շրջաններում: Երբեմնակի լոււող սկեպտիկ և բացասական ձայների հակառակ՝ մենք կասենք, որ շատ, չափազանց շատ բան է տօւել Գուտառեմբերգի գիւտը մեզ հայերիս, եթէ մահաւանդ ի նկատի առնենք այն դժուարին պայմանները, որոնց մէջ յաճախ եղել է հայ զիրքը, այն ակամայ և դժուարանցանելի ուղինները, որոնց վրայով քայլել է բազմաչարչար հայ զիրքը, այն օտար և անհիւրընկալ հորիզոնները, որոնց տակ շատ անգամ ստիպուած է եղել թափառել հայ մատեանը: Տեղերը յաճախակի փոխելով, երբեմն հարաւի պայծառ երկնքի տակ, յարմարաւոր ու գոհ, երբեմն հիւսիսի մշուշապատ երկնակամարի-մռայլ հորիզոնների մէջ-երկու դեպքումն էլ օտար ու բուն երկրի կարօաը ճակտին—միշտ առաջ է դնացել հայ զիրքը, արձագանք տալով հայ ժողովրդի, հայ մտաւորականութեան ժամանակի պահանջներին, միշտ հոգեոր ու մտաւոր մնունք տալով այն ժողովրդին, որին ծառայելու համար հանդէս էր եկել:

Համարեա բոլոր հայ զազութներում երեան է եկել նա, համարեա ամենուրեք ուղեկցել է նա հային ու այդ համագամանքը առաւել քան որեէ այլ բան պատիւ է բերում հայ ցեղին, յառաջադիմելու, քաղաքակրթուելու նրա տեհնչանքին: Սակայն նա հանգստանալ կարող էր վերջիվերջոյ բուն իսկ հայրենիքում, սպիտակափառ Մասսի հովանու տակ, նրա հարազատ ու սիրազորով թերի տակ.

և երբ նա միանգամ այստեղ հաստատուեց, այլ ևս չեր  
թողնելու հայ իրականութիւնը:

Ճիշտ է, օտար վայրերում նա ունեցել է երբեմն  
ծաղկման շրջաններ, տուել է առատ պառւզներ, երբեմն  
օտար հորիզոնների տակ նա եղել է լուսաւոր աստղ հայ-  
րենիքում խարխափող ժողովրդի համար, բայց նրա ազա-  
տութիւնն ու ուրախութիւնը պէտք է որոնել բուն իսկ  
հայրենիքում, հայ ժողովրդի մէջ, նրա ցաւերին ու դար-  
դերին գիտակ և կարեկից, նրա ուրախութիւններին ու  
բերկրանքին խնդակից: Հայ մատեանը իւր բուն դերի մէջ  
կարող էր մտնել միայն հայ իրականութեան սահմաննե-  
րում: Եւ այն օրից նա յառաջադիմել է մերթ դանդաղե-  
լով ու յամբընթաց, մերթ սրբնթաց և ոստիւններով—  
բայց ճիշտ յառաջիադաց, ճիշտ անշեղ իւր կէտ նպա-  
տակին դիմելով: Անշուշտ շատ ազգերի մենք կարող ենք  
նախանձով նայել ու տեսնել, ինչքան արդիւնք, ինչպիսի  
հարստութիւն են հանդէս բերել նրանք թերևս աւելի կարճ  
ժամանակում քան մենք հայերս չորս դարում: Բայց ով  
ի նկատի ունենայ հայ ցեղի և իրականութեան մարտի-  
բոսագրութիւնը, ով չմոռանայ այն անբնական ու դժուարին  
կացութիւնը, որի մէջ զրուած է եղել հայ ազգը այդ  
միջոցին, նրա սիրան անշուշտ մի անհուն բերկրանքով  
կըլցուի, որ հայն ունեցել է դեռ քաջութիւն և արիութիւն  
տանելու բախտի հարուածները, փրկելու իւր մտաւոր ու  
հոգեկան կեանքը, ազատելու իւր զիրքը մարտիրոսագրու-  
թիւնից ու բերելու մեզ հասցնելու:

Մեր ազգային մի քանի գանձերի կողքին հայ զիրն  
ու զրականութիւնը ամենամեծ դանձն է, որոնցով մենք  
այսօր պարծենալ կարող ենք: Փառք և պատիւ բոլոր նոցա,  
որոնք արհամարհեցին անձնականն ու նիւթականը, որոնք  
երկար ու ձիգ զոհողութիւնների միջով առաջ տարան հայ  
զրքի դժուարին զործը և մեղ այսօր եղակի առիթ տուին  
տօնելու հայ ազագրութեան չորսնարիւրամեակի պանծալի  
հանդէսը: Դա անզուգական տօնն է ամենքի, որոնք այդ  
չորս հարիւր տարուայ ընթացքում աշխատել են ու նպաս-

տել հայ մտքի մշակման, հայ հոգու լաւագոյն արդիւնքների, հայ յոյզերի առողջ գեղութիւների, դա համայն հայութեան լաւագոյն մտքերի, ազգային մտաւորականութեան փառապանծ տօնն է:

Եւ զարմանալի չէ, որ այսօր հայ ամբողջ մամուլը միալար երգում է այդ տօնը հանդիսաւորապէս յաւերժացնելու անհրաժեշտութիւնը և կոչ է անում հայ ազգի բոլոր խաւերին արձագանք տալ դրան: Մենք լիայոյս ենք, որ այդ կոչն արձագանք կըդտնի ու հայ ապագրութեան տօնը ձուլուելով իրան յատուկ պատշաճ ու վեհ ձեւերի մէջ, կը դառնայ մեր ազգային գերագոյն հանդէսներից մէկը:<sup>\*</sup>)

Հայ թերթերն ու ամսագրերը լի են տարավերջի խոհերով, անցեալ տարուայ ազգային հասարակական կեսնիքի հասարակական նկարագրով, նրա մանրամասն քննադատութեամբ: Պակաս չեն նաև յօդուածներ, որոնք ապագայի նկատմամբ յայտնում են մի շարք ցանկութիւններ ու դրանց իրականացումը սպասում մեր ազգային կուլտուրական, եկեղեցական բարձրագոյն հաստատութիւններից ու հայ ժողովրդի գեկավարող մտքերից:

Յատկապէս տաճկահայ թերթերի մէջ առանձին կերպով աշքի են ընկնում այն բազմաթիւ նկարագրութիւններն ու յուսահատ խորհրդակցութիւնները, որոնք արւում են թիւրքական Հայաստանի անապահով և վահնդառոր կացութեան առթիւ: Տաճկահայի վիճակն այլ ևս անտանելի է դառնում դաւառներում, սկսած Կիլիկիայից մինչև Վանի վիճակիթը, Կարինից մինչև Տիգրանակերտ՝ Թիւրքիայի վիճակին լաւ ծանօթ անձնաւորութիւնների տարակոյսն

\* ) Գերջերս հայ մամուլի մէջ վէճ է ծագել հայ ապագրութեան սկզբնաւորութեան ճիշտ ժամանակի մասին: Պ. պ. Ս. Մալխասեան և Խաթ. առաջար կում են յօրելիանը յետաձեղել, որովհետև հայ ապագրութիւնը սկսուել է ոչ թէ 1512-ին, այլ 50-60 տարի յետոյ: Մենք նպատակայարմար կըհամարէինք, որ այդ տարակոյսները մի դիտակ և ձեռնահաս մասնամասն կողմից փարտառէին:

ու երկիւղը տաճկական սահմանադրութեան հանդէս գալու առթիւ արտայայտուած խանդավառ յուսադրութիւնների դիմաց՝ մինչև այժմ ոչ միայն չփարատուեցին, այլ գնալով խտացան և այսօր սպառնացող կարկարեր թղպերի պէս կախուել Հայ գաւառների առանց այն էլ սղտոր ու մշուշապատ երկնակամարի վրայով։ Հաւաստիացումներ եղան թիւքական բարձրաստիճան անձնաւորութիւնների կողմից, նոյնիսկ մինիստրների միջից մարդիկ եղան, որոնք սպառնացին հրաժարուել, եթէ տաճկահայ իրականութիւնը ամենամօտ ապագայում չբարեփոխուի. բայց վիճակը գնալով վատթարացել է և այսօր հայ ժողովրդի դրութիւնը անտանելի է գաւառների մէջ քիւրդ ցեղապեանների, բէյերի և աղանների անլուր ունձգութիւնների և թիւքը պաշտօնեանների դատապարտելի անտարբերութեան դիմաց։

Տաճկահայաստանի յուսահատական վիճակը կենդանի հետաքրքրութիւն է յարուցանում գաղութների մէջ. մասնաւորապէս Ամերիկայի շատ քաղաքներում հայ գաղութները միթինկներով և զրութիւններով բողոքում են պետութեան անտարբերութեան դէմ և պահանջում են շուտափոյթ անյետաձգելի միջամտութիւն։ Իսկ Լոնդոնի հայ գաղութը՝ անգլիական ազատ կարգերի մէջ սնուած առաջին պարլամենտական քայլն է արել, մի յատուկ պատգամաւորութիւն է ուղարկել Լոնդոնի Օսմանեան գեսապանի մօտ։ Պատգամաւորութիւնը թուելով վերջերս հայաբնակ նահանգների մէջ այն բազմաթիւ հարստահարութիւնները, առևանգումները, սպանութիւնները և զրաւումները, խնդրել է, որ գեսապանը միջնորդէ Օսմանեան կառավարութեան մօտ, որպէս զի ստիլողական միջոցներ ձեռք առուեն Օսմանեան պետութեան հայ քաղաքացիների կեանքի, ինչը և պատւոյ ապահովութիւնը վերահաստատելու։ Դեսպանը լսելով այդ ամենը ու իւր համամտութիւնն արտայայտելով, հետեւեալ օրն և եթ մի ընդարձակ և խիստ ստիպողական հեռագրով դիմել է Պօլիս և յայտնել պատգամաւորութեան ցանկութիւնը։

Սակայն այդ դիմութիւնը և Օսմանեան կառավարութեան հաւաստիացութիւնը նկատմամբ գժրախտաբար մենք ոչ մի հիմք չունենք լաւատես լինելու: Թիւրքիայի արդի ներքին և արտաքին տաղնապը բնաւ ժամանակ ու յարմարութիւն չի տալիս թուրք պետական զործիչներին լրջօրէն մտածելու հայ ժողովրդի տնտեսական և հասարակական զրութեան մասին: Այս էլ հարց է, որ եթէ ժամանակ և յարմարութիւն ունենան օսմանեան պետութեան ներկայացուցիչները, որքան կըցանկանան զրադուել հայ գաւառների վիճակով:

Տաճկահայ գաւառներում այժմ հայ կեանքի ամենախոշոր վէրքերից մէկը հողային հարցն է: Այս խնդրով շահագրգոռուած են հաւասարապէս հայ և քիւրդ, և նրա այս կամ այն կերպ լուծումից շատ բան է կախուած: Մի մանրամասն յօդուածով Երուանդ վարդապետ Փերտահճեանը («Բիւզանդիոն» թիւ 4625) յենուած իւր դիտողութիւնների և փորձի վրայ, աշխատում է լոյս սփռել հողային խնդրի վրայ: Յայտնի է, որ հայերը այն սոսկումի և կոտորածի օրերից յետոյ թողին իրանց երկիրն ու հողերը, տունն ու տեղը և անէծքով ու դառնութեամբ հեռացան իրանց հայրենիքից: Այդ հողերի և կալուածքների իսկական հարազատ դարաւոր տէրերին յաջորդեցին քիւրդերը, որոնք տիրացան խողխողուած կամ արհաւիրքներից վախուսատուած հայերի ամբողջ ժառանգութիւններին, բոլոր դիւզերին: «Լեռներու և ձորերու մէջ քիւրդ պէյերէ և աղաներէ սմանց ունեցած ազգեցութիւնը համբու անգամ երբեմն չէր վայելեր իւր բանակներուն մէջ»: Յարգելի յօդուածագրի կարծիքով մեզաւորը ոչ թէ քիւրդ ցեղն է, այլ նրա ցեղապետները, նրա աղաներն ու բէյերը: «Քիւրդ աղքատիկ դասակարգը խեղճ, վախկոտ, կոյր համակերպող մէ, չարիք կըդործէ տւելի իւր պետերուն թելագրութիւնովը»: — Զմռանալով ցեղապետների զրգուիչ և աւերող աղղեցութիւնը, այսքանն ասենք, որ քիւրդ ցեղը դարեր շարունակ ասլրելով այն պայմանների մէջ, ինչ որ այսօր տիրող են դեռ Տաճկաստանում, տեսել և սովորել է այդ

իրաւակարգին, այսինքն մի կարգ, որտեղ թալանողը քիւրդն է, աւերողն ու յափշտակողը միշտ քիւրդն է, իսկ աշխատողն ու տանջողը, համբերողն ու տանողը հայ զիւղացին։ Բնականօրէն նրա բնագիտներն ևս այդ ուղղութեամբ պիտի դարդնային, բնականօրէն նա ևս՝ սոսկական քիւրդը, նոյնպիսի մի պատուհաս պիտի դառնար խեղճ հայ զիւղացու զիսին, ինչոքս և նրա բէյն ու ցեղագեար։ Ինչ կասկած, որ քիւրդ աշխրէթների և ազաների շահատակութիւնների տակ հեծում են թէ քիւրդ և թէ հայ ժողովուրդները։ Բայց նոյնքան և անկասկած է, որ հայի տանջանքն ու հարստահարութիւնը կրկնակի է— քիւրդ ցեղագետի և քիւրդ ժողովրդի զիմաց, ել չենք խօսում թիւրք ուաշտօննեաների մասին։ Եւ կարծել, թէ այդ դարաւոր զրութիւնը մի քանի մեծախոս և պարձենեկոտ, բայց իրօք սին և զատարկ տարիների ընթացքում փոխել է, առնուազն միամտութիւն կրկներ։

Յաւին դարման անելու միակ ճարը հային դարձեալ հողատէր դարձնելն է։ Թէ ինչ եղանակով կարելի է հողերի վերադարձն առանցքել, այդ մասին կան տարբեր տուածարկներ։ Փերտահճեան վարդապետն օրինակ առաջարկում է գործը դատարանի միջոցով անել։ Գտնել և հաւաքել հին կալուածագրերը և փաստաթղթերը և կրթնած դրանց վրայ դատ բաց անել քիւրդ յափշտակիչների և կեղեքողների դէմ, որոնք իրանց սրի ու գաղանաբարոյ բնագիտների վրայ յենուած՝ ժողովրդին դարձրել են իրանց ստրուկները։ Մի այլ պարոն («Բիւզանդիան» թիւ 4630) ի նկատի ու նենալով որ խնդրի այդկերպ լուծումը կարող է անզութ և արիւնաքամ բռնաւորների թշնամութիւնն հայ ժողովրդի վրայ աւելի ծանրացնել, առաջարկում է, որ հայ ժողովուրդը կառավարութիւնից ուրիշ հողեր պահանջի, ուրիշ տեղերում, թերեւս աւելի լաւ հողեր։ Այդ կարծիքը մենք միանգամայն անհեթեթ ենք գտնում։ Խնդիրն այսուել լաւի և վատի վրայ չէ։ հայ զիւղացին իւր սեփական հողի վերադարձն է պահանջում, այդ սեփականութիւնը նրանից խլել են, ապօրինաբար յափշտակել։ Ի՞նչ խօսք կարող է

լինել այստեղ փոխարինման մասին։ Ինչ որ խոպան գաշտեր և անապատներ ուղարկել հայերին, որոնք իրանց արգար քրտնքով մշակուած դաշտերն են յետ ուղում— նշանակում է չթափանցել այս հասարակական խնդրի նույն իրաւական կողմը։ Այսպէս թէ այսպէս խնդիրը հրապարակի վրայ է և Օսմանեան պարլամենտոն ու նրա կառավարութիւնը, եթէ ուղում են անկեղծ ապացոյց տալ ժողովը դասիրութեան, պէտք է անյապաղ ձեռնարկեն այս խնդրի լուծմանը։

Անցեալ 1911 թուականը հայ եկեղեցին իւր ամբողջութեամբ համարեա ապրել է սպասողական օրեր, այդ դրութիւնն այժմ գեռ շարունակում է ընդհանուր առմամբ։ Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթուղիկոսը գեռ հաստատուած չէ, որով դեռ մեր պաշտօնական, եկեղեցական ու զպրոցական հաստատութիւնների շատ խնդիրներ, որոնք կապուած են կաթուղիկոսի հետ, առկախ են մնացել։ Առկայն լիայոյս ենք, որ նորընտիր Հայրապետը շուտով հնարաւորութիւն կունենայ շարունակելու և առաջ տանելու մեր ազգային-եկեղեցական հաստատութիւնների խաղաղ և կուլտուրական աշխատանքը ժողովրդասէր և բառամիտ ուղղութեամբ։

Նորերումս ընտրուած տաճկահայոց պատրիարք Տ. Յովհաննէս արքեպ., Արշարունին հանդիսաւոր կերպով իւր ուխտն է արել Պօլսի Հայոց մայր եկեղեցու մէջ՝ ծնրադիր արտասանելով հետեւեալ խօսքերը։ «Առաջի Աստուծոյ և ի ներկայութեան ազգային ժողովի հրապարակաւ կուխտեմ հաւատարիմ մեալ սահմանադրական օսմանեան պետութեան և ճշմարտապէս հսկել ազգային սահմանադրութեան անթերի գործադրութեանը»։— Սուլթանական հաստատութիւնից յետոյ ս. պատրիարքը մի շարք պաշտօնական այցելութիւններ է արել, ամենից առաջ ընականօրէն սուլթանին։ Սուլթանի մօտ արտասանուած իւր ճառի մէջ ս. պատրիարքը յատկապէս շեշտել է սահմանադրութեան անշեղ կատարման մասին։ Ս. պատրիարքի ընդունելու-

թիւնը սուլթանի և նրա մինիստրների կողմից եղել է շատ սիրալիր:

Մինչդեռ Ամենայն Հայոց Հայրապետութիւնն ու Պօլսի հայոց պատրիարքութիւնը գտան իրանց արժանաւոր հովուապետերը, Երուսաղէմի պատրիարքութիւնը գեռ ևս անզլում է մնում և նրա աթոռը թափուր ու անմիխթար:

Նախանձելի չէ նաև Կիլիկիոյ Հայոց վիճակը: Այստեղ միսիթարականն այն է սակայն, որ Կիլիկիայի Տ. Սահակ կաթուղիկոսը ամեն կերպ աշխատում է իւր բարձր կոչմանն ու աստիճանին համապատասխան գործ ու արդիւնք ցոյց տալ: Նա ամեն հնար գործ է զնում վերականգնելու Կիլիկիայի աւերակները և օգնելու ժողովրդի քայլայուած վիճակին: Սակայն ինչպէս ճիշտ նկատում է «Տաճարա-ի յօդուածագիրը», Կիլիկիոյ կաթուղիկոսը վերջիվերջոյ շատ քիչ բան կարող է անել, եթէ առանձին և անօգնական մնայ: Հարկաւոր է, որ կենդրոնական վարչութիւնն ու ազգային ժողովը իւր մտածողութեան զլխաւոր առարկաներից մէկը դարձնի Կիլիկիան, հարկաւոր է, որ նրանք «Կիլիկիան մտածեն, Կիլիկիան չմոռնան»:

Վերջին ժամանակներս Տաճկաստանի հայ կաթողիկ համայնքի մէջ անբաւականութիւնը զնալով ծայրայեղ չափերի է հասել Թերգեան պատրիարքի գէմ: Անբաւականութեանց զլխաւոր պատճառն այն է, որ ս. Թերգեանը իրան համարում է «պատրիարք ողորմութեամբն Աստուծոյ» և իրան ընտրող ժողովրդին չի ուզում ամեննեին հաշուի առնել: Նա իւր պատրիարքութիւնն անուանում է երկնատուր, երկնապարզե և իրան պատասխանատու չէ համարում ժողովրդի առաջ: Բնական է, որ նա իւր վստահութիւնն ու հեղինակութիւնը իսպառ կորցնէր:

Այդպէս անմիխթար չէ հայ բողոքականների զրութիւնը, նրանք շարուկում են լաւագոյն յարաբերութիւններ պահպանել Պօլսի պատրիարքի հետ և մամուլի մէջ մշակում և զարգացնում են այդ բարեկամութիւնը և ցաւում ազգի զլխին եկած աղէտների համար: